ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» օգոստոսի 2023 թվականի N 2052-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԵՎՈՐԳ ՍԱՄՎԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Գևորգ Սամվելի Գրիգորյանի 2023 թվականի օգոստոսի 11-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Սամվելի Գրիգորյանին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2023 թվականի օգոստոսի 14-ից:
2. Չվճարվող արձակուրդի տևողությունը 4 օր՝ 2023 թվականի օգոստոսի 14-ից 17-ը ներառյալ:
3. Չվճարվող արձակուրդի ընթացքում Գևորգ Սամվելի Գրիգորյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Մկրտիչ Աշոտի Դավթյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գևորգ Սամվելի Գրիգորյանին և Մկրտիչ Աշոտի Դավթյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ա.ՊԱՊԻԿՅԱՆ
փոխարինող

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» օգոստոսի 2023 թվականի N 2051Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 336-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աթարբեկյան փողոցի N 122 հասցեի բնակելի տան հողամասին կից 143.4 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 78.31 քառակուսի մետր արտաքին 63.57 քառակուսի մետր ներքին մակերեսով օժանդակ (մառան) շինություններն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 336-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աթարբեկյան փողոցի N 122 հասցեի բնակելի տան հողամասին կից 143.4 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 78.31 քառակուսի մետր արտաքին 63.57 քառակուսի մետր ներքին մակերեսով օժանդակ (մառան) շինություններն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 336-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Վերնագրում և նախաբանում և որոշման 1-ին կետում «63.57 (վաթսուներեք ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական)» թիվը և բառերը փոխարինել «62.96 (վաթսուներկու ամբողջ իննսունվեց հարյուրերորդական)» թվով և բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» դեկտեմբերի 2023 թվականի N 2050-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ N 17/19 ՀԱՍՑԵԻ 4.94 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 17 շենքի N 2/1 հասցեի խանութը սեփականության իրավունքով պատկանում է «Սվետլանա-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 16092022-08-0030 վկայական):

Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 17/19 հասցեի 4.94 (չորս ամբողջ իննսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 08082023-08-0044 վկայական):

«Սվետլանա-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սեդա Սաֆարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով «Սվետլանա-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 17 շենքի N 2/1 հասցեի խանութին կից Գարեգին Նժդեհի փողոցի N 17/19 հասցեի 4.94 (չորս ամբողջ իննսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասն աստիճաններ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրելու խնդրանքով:

Նկատի ունենալով փաստացի իրադրությամբ պայմանավորված քաղաքաշինական հնարավորությունը, հաշվի առնելով, որ տրամադրված հողամասը գտնվում է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 48[1]-րդ հոդվածի 6-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 3-րդ կետի «ա» ենթակետի և հիմք ընդունելով «Սվետլանա-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սեդա Սաֆարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հունիսի 26-ին N 13291 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. «Սվետլանա-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը աստիճաններ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 17/19 հասցեի 4.94 (չորս ամբողջ իննսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը 10 (տասը) տարի ժամկետով և տարեկան վարձավճարի չափ սահմանել 10868 (տասը հազար ութ հարյուր վաթսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սահմանված կարգով կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր (պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժին):
3. Պարտավորեցնել «Սվետլանա-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը.
   1) Աստիճաններ և թեքահարթակ կառուցելու համար սահմանված կարգով Գյումրի համայնքի ղեկավարին ներկայացնել հաստատված ձևի հայտ ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար:

2) Համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին» օրենքի և այլ նորմատիվ, իրավական փաստաթղթերի պահանջների համաձայն, սեփական միջոցներով պատվիրել նախագծային փաստաթղթեր ու սահմանված կարգով ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինթույլտվություն:

3) Շինաշխատանքները նախագծով սահմանված ժամկետներում ավարտելուց հետո շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Պայմանագրի նոտարական վավերացումը և պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը կատարել «Սվետլանա-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցների հաշվին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Սվետլանա-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.08.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«11» օգոստոսի 2023 **թվականի** N 2099-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՕԹՅԱ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գայանե Գրիգորյանի (ՀՎՀՀ՝ 57267978, գրանցման ամսաթիվը՝ 16.06.2009 թ.) 2023 օգոստոսի 8-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի օգոստոսի 8-ին 16507-2023 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Գայանե Գրիգորյանին Գյումրի քաղաքի Մայակովսկի փողոցի հարևանությամբ իրականացնել սուրճի բացօթյա վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի նոյեմբերի 7-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Գայանե Գրիգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.08.2023

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«11» օգոստոսի 2023 թվական N 2098Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ս.ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 99 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ս.Շահումյան փողոց թիվ 99 հասցեի 68,63 (վաթսունութ ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային բնակելի ֆոնդի տունը փաստացի զբաղեցնում է 94,8 (իննսունչորս ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1089-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին N 51 որոշումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Գյումրի քաղաքի Ս.Շահումյան փողոց թիվ 99 հասցեի 68,63 (վաթսունութ ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային բնակելի ֆոնդի տան ու դրա փաստացի զբաղեցրած 94,8 (իննսունչորս ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը ներկայացնել պետական գրանցման, համաձայն կից տրվող հատակագծային ուրվանկարի:

03.08.2023

x

2023թիվ Գյումրի համայնք **Վ. Սամսոնյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» օգոստոսի 2023 թվական N 2097Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՍԱՆՆԱ ՖՈՒԼՏՈՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Սուսաննա Ֆուլտոնի Մալխասյանը (անձնագիր AR 0531197, տրված՝ 06.12.2017 թվականին 064-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Սովխոզ 17 շենք 1 թիվ 10 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի օգոստոսի 4-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Սովխոզ 17 դոս շենք 1 թիվ 10 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իրեն որպես սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2008 թվականի հուլիսի 03-ի թիվ 1312 որոշմամբ Գյումրի քաղաքի Խր. Հայրիկ խճուղի /Սովխոզ 17 դոս/ 1 շենքի թիվ 10 բնակարանը հատկացվել է Սուսաննա Ֆուլտոնի Մալխասյանին:

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2008 թվականի հուլիսի 03-ի թիվ 1312 որոշմամբ տրված թիվ 10 միասնական օրդերը, 2023 թվականի հունիսի 22-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 230163016204 և «Գյումրու Բնակարանների սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի հուլիսի 10-ի տեղեկանքները, Սուսաննա Ֆուլտոնի Մալխասյանի անձնագրի պատճեն և Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության կողմից տրված 2023 թվականի հունիսի 20-ի եզրակացությունը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի օգոստոսի 04-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի օգոստոսի 08-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են դիմումատուի՝ քաղաքացի Սուսաննա Ֆուլտոնի Մալխասյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Սովխոզ 17-րդ թաղամաս 1 շենք թիվ 10 հասցեի 55,21 (հիսունհինգ ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 03082023-08-0048 վկայական)

բ) Գյումրի քաղաքի Խր. Հայրիկ խճուղի /Սովխոզ 17 դս/ 1 շենքի թիվ 10 բնակարանը 2008 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2008 թվականի հուլիսի 03-ի թիվ 1312 որոշմամբ տրված թիվ 10 միասնական օրդեր):

գ) Գյումրի համայնքի Սովխոզ 17, 1 շենք թիվ 10 հասցեում հաշվառված է քաղաքացի՝ Սուսաննա Ֆուլտոնի Մալխասյանը 2008 թվականից (հիմք՝ 2023 թվականի հունիսի 22-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 230163016204 և «Գյումրու Բնակարանների սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի հուլիսի 10-ի տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացի Սուսաննա Ֆուլտոնի Մալխասյանի անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Վերոնշյալ քաղաքացու անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում 1998թվականի մարտի 1-ից առ այսօր անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի հուլիսի 14-ի N US-14072023-99-0344 տեղեկանք):

ե) Գյումրի համայնքի Սովխոզ 17, շենք 1, թիվ 10 բնակարանի ընդհանուր վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի: Շենքի կրող կոնստրուկցիաների վիճակը գնահատվում է բավարար (հիմք՝ Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության կողմից տրված 2023 թվականի հունիսի 20-ի եզրակացություն):

զ) Քաղաքացի Սուսաննա Ֆուլտոնի Մալխասյանը Գյումրի քաղաքի Խր. Հայրիկ խճուղի /Սովխոզ 17 դս/ 1 շենքի թիվ 10 բնակարանը վարձակալել է 2008 թվականի հուլիսի 03-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության

կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Սուսաննա Ֆուլտոնի Մալխասյանի դիմումը բավարարել:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Սովխոզ 17-րդ թաղամաս 1 շենք թիվ 10 հասցեի 55,21 (հիսունհինգ ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

   1) Սուսաննա Ֆուլտոնի Գրիգորյանին ծնված՝ 1960 թվականին,

   որպես սեփականություն :
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի Սուսաննա Ֆուլտոնի Գրիգորյանին:
3. Քաղաքացի Սուսաննա Ֆուլտոնի Գրիգորյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Սուսաննա Ֆուլտոնի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

ԱՐԹՈՒՐ ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. Գյումրի համայնք

Ա.ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» օգոստոսի 2023 թվական N 2096Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Մանվել Սարկիսի Հովսեփյանը (անձնագիր 45 15 430112, տրված՝ 12.11.2015թ. 770-061-ի կողմից, հաշվառված՝ Մոսկվայի մարզ,Նոգինսկի շրջան,գյուղ Բունկովո,փ.Լենինսկայա 18 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս Հարություն Սերյոժայի Հովհաննիսյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատերեր), 2023 թվականի հուլիսի 27-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Երկաթ գծի 14 շենք թիվ 2 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Հարություն Սերյոժայի Հովհաննիսյանին որպես սեփականություն:

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի հունիսի 2-ի Շ-1537/175 գրությունը, Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2023 թվականի հունիսի 14-ի N -8/63-523 գրությունը, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի հուլիսի 18-ի տեղեկանքը, Հարություն Սերյոժայի Հովհաննիսյանի անձնագրի պատճենը, Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2019 թվականի մարտի 25-ի եզրակացության պատճենը, «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի հուլիսի 28-ի տեղեկանքը, Հարություն Սերյոժայի Հովհաննիսյանի լիազորագիրը Գյումրի համայնքից Երկաթ գծի 14 շենք թիվ 2 հասցեի բնակարանի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի հուլիսի 27-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի օգոստոսի 8-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Հարություն Սերյոժայի Հովհաննիսյանի լիազորված անձ՝ Մանվել Սարկիսի Հովսեփյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Երկաթգծի 14/2 հասցեի 80.51 (ութսուն ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը սեփականության իրավունքով գրանցված Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ N 29042019-08-0027 վկայական) :

բ) Գյումրու /Լենինականի/ Երկաթգծի թիվ 14 ֆոնդի տան բնակարանների բաշխման նյութերը չեն պահպանվել (հիմք ՝«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի հունիսի 2 –ի Շ-1537/175 գրություն):

գ) Գյումրի քաղաքի Երկաթ գծի 14 շենք թիվ 2 հասցեում հաշվառված է Հարություն Սերյոժայի Հովհաննիսյանը 1995 թվականից (հիմք՝ Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2023 թվականի հունիսի 14-ի N -8/63-523 գրություն, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի հուլիսի 18-ի N 1496 տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացի Հարություն Սերյոժայի Հովհաննիսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և նրա կողմից 1999թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի հուլիսի 28-ի -ի N US-28062023-99-0235 տեղեկանք):

ե) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Երկաթ գծի փողոց, 14 շենք թիվ 2 բնակարանի վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի, տեխնիկական վիճակը՝ բավարար (հիմք՝ Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2019 թվականի մարտի 25-ի եզրակացություն):

զ) Քաղաքացի Սերյոժա Հովհաննիսյանը Գյումրի էլցանցում բաժանորդ է 2002 թվականից մինչև օրս (հիմք՝ 2023 թվականի հուլիսի 28-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Գյումրի» ցանցի տեղեկանք):

է) Քաղաքացի Հարություն Սերյոժայի Հովհաննիսյանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամհամայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Հարություն Սերյոժայի Հովհաննիսյանի լիազորված անձ՝ Մանվել Սարկիսի Հովսեփյանի դիմումը բավարարել:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Երկաթգծի 14/2 հասցեի 80.51 (ութսուն ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

   1) Հարություն Սերյոժայի Հովհաննիսյանին ծնված 1977 թվականին,

   որպես սեփականություն:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Հարություն Սերյոժայի Հովհաննիսյանին:
3. Քաղաքացի՝ Հարություն Սերյոժայի Հովհաննիսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Հարություն Սերյոժայի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

11.08.2023

X

ԱՐԹՈՒՐ ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. Գյումրի համայնք **Ա.ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«11» Օգոստոսի 2023 թվական N 2045-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՋԵՄՄԱ ԿՈԼՅԱՅԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ,ԼԻԱՆԱ ՎՐԵԺԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ, ՆԱԻՐԱ ՄՈՒՐՈՅԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Ջեմմա Կոլյայի Մուրադյանը (անձնագիր AT 0505344, տրված՝ 22.06.2020թ., 064-ի կողմից,հաշվառված՝ ք. Գյումրի, Խր.Հայրիկ խճ. շենք 29 թիվ 26 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի հուլիսի 28-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Խր.Հայրիկ 29 շենք թիվ 26 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1985 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 22 որոշմամբ Գյումրի քաղաքի Թբիլիսիի խճ.29 շենքի թիվ 26 բնակարանը հատկացվել է Ջեմմա Կոլյայի Մուրադյանի 3 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն և 2 աղջկան:

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1985 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 22 որոշմամբ տրված թիվ 26 միասնական օրդերը, 2023թվականի հուլիսի 6-ի Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի N 8/62-1172 գրությունը, 2023 թվականի հուլիսի 28-ի «Գյումրու բնակարանների սպասարկում» ՓԲԸ-ի N 1586 տեղեկանքը, Ջեմմա Կոլյայի Մուրադյանի անձնագրի պատճենը, 2023 թվականի հունիսի 25-ի Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության եզրակացությունը, Լիանա Վրեժի Մուրադյանի, Նաիրա Մուրոյի լիազորագրերը :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2- րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի հուլիսի 28-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի օգոստոսի 8-ը, դիմումատուն պատշաճ կարգով

ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Ջեմմա Կոլյայի Մուրադյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Խրիմյան Հայրիկի փողոց 29 շենք, թիվ 26 հասցեի 35.71 (երեսունհինգ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ N 24072023-08-0040 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Թբիլիսիի խճ.29 շենքի թիվ 26 բնակարանը հատկացվել է Ջեմմա Կոլյայի Մուրադյանի 3 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն և 2 աղջկան (հիմք՝ Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1985 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 22 որոշմամբ տրված թիվ 26 միասնական օրդեր):

գ) Գյումրի քաղաքի Խր.Հայրիկ խճ. 29 շենք 26 հասցեում հաշվառված են՝ Նաիրա Վրեժի Մուրադյանը 1992 թվականից, Ջեմմա Կոլյայի Մուրադյանը 1986 թվականից , Լիանա Վրեժի Մուրադյանը 1996 թվականից: Նշված հասցեում հաշվառված բնակվում է Ջեմմա Կոլյայի Մուրադյանը (հիմք՝ 2023 թվականի հուլիսի 6-ի Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի 8/62-1172 գրություն, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի հուլիսի 28-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացիներ Նաիրա Մուրոյի, Ջեմմա Կոլյայի Մուրադյանի, Լիանա Վրեժի Մուրադյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի հուլիսի 3-ի -ի N US-03072023-99-0319, N US-03072023-99-0236, N US-03072023-99-0187 տեղեկանքներ):

ե) Գյումրու Խրիմյան Հայրիկ փողոց 29 շենքի թիվ 26 բնակարանի հատվածում կրող տարրերի վնասվածությունը գնահատվում է երկրորդ-երրորդ աստիճանի (հիմք՝ Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի հունիսի 25-ի եզրակացություն):

զ) Քաղաքացի Ջեմմա Կոլյայի Մուրադյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Խր.Հայրիկ խճ. 29 շենք թիվ 26 հասցեի բնակարանը վարձակալել է 1985 թվականի դեկտեմբերի 29-ից , այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել

քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Ջեմմա Կոլյայի Մուրադյանը դիմումը բավարարել:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ

կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Խրիմյան Հայրիկի փողոց 29 շենք, թիվ 26 հասցեի 35.71 (երեսունհինգ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

1) Ջեմմա Կոլյայի Մուրադյանին	ծնված՝ 1957 թվականին,
2) Լիանա Վրեժի Մուրադյանին	ծնված՝ 1979 թվականին,
3) Նաիրա Մուրոյին	ծնված՝ 1976 թվականին

որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ Ջեմմա Կոլյայի Մուրադյանին,Լիանա Վրեժի Մուրադյանին, Նաիրա Մուրոյին:
3. Քաղաքացիներ Ջեմմա Կոլյայի Մուրադյանին,Լիանա Վրեժի Մուրադյանին, Նաիրա Մուրոյին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Ջեմմա Կոլյայի Մուրադյանին,Լիանա Վրեժի Մուրադյանին, Նաիրա Մուրոյին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչականկամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

ԱՐԹՈՒՐ ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. Գյումրի համայնք **Ա.ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» Օգոստոսի 2023 թվական N 2044Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՆՆԱ ՌՈԲԵՐՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ԿԱՐԵՆ ՌՈԲԵՐՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Արմինե Սարգսի Անդոսյանը (անձնագիր AU 0517359, տրված՝ 22.11.2021 թվականին 030-ի կողմից, հաշվառված՝ Շիրակի մարզ Ախուրյան համայնք Մեծ Սարիար 5-րդ փողոց տուն 7 հասցեում, որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Կարեն Ռոբերտի Գրիգորյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի հուլիսի 31-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Արագած 6 , 4 շենք թիվ 10 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 1998 թվականի մայիսի 18-ի թիվ 245 որոշմամբ Գյումրի քաղաքի Արագած 6-րդ թաղամաս 4 շենքի թիվ 10 բնակարանը հատկացվել է քաղաքացի Ռոբերտ Ռաֆիկի Գրիգորյանին չորս անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, աղջկան և տղային:

Քաղաքացիներ՝ Հռիփսիմե Ցոլակ Հարությունյանը և Ռոբերտ Ռաֆիկ Գրիգորյանը մահացել են (հիմք ԱԲ N 257928 և ԲԱ 516327 մահվան վկայականներ):

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 1998 թվականի մայիսի 18-ի թիվ 245 որոշմամբ տրված թիվ 44 փոխանակման օրդերը, 2023 թվականի հուլիսի 15-ի Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային բաժանմունքի թիվ 8/12-1758 գրությունը, «Վել-Մանո» համատիրության 2023 թվականի հուլիսի 31-ի № Վ/Մ-5 տեղեկանքը, քաղաքացիներ՝ Աննա Ռոբերտի Գրիգորյանի և Կարեն Ռոբերտի Գրիգորյանի լիազորագրերը Գյումրի համայնքից Արագած 6-րդ թաղամաս, 4 շենք, թիվ 10 հասցեի բնակարանի իրենց բաժնեմասերի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի

դրույթներով՝ 2023 թվականի հուլիսի 31-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի օգոստոսի 08-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են դիմումատուի՝ Կարեն Ռոբերտի Գրիգորյանի լիազորված անձ՝ Արմինե Սարգսի Անդոսյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Արագած 6-րդ թաղամաս 4 շենք, թիվ 10 հասցեի 75,98 (յոթանասունհինգ ամբողջ իննսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 24072023-08-0016 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Արագածի 6 թաղ. 4 շենք թիվ 10 հասցեի բնակարանը 1998 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 1998 թվականի մայիսի 18-ի թիվ 245 որոշմամբ տրված թիվ 44 փոխանակման օրդեր):

գ) Գյումրի համայնքի Արագած 6թղմ. 4 շենք թիվ 10 հասցեում հաշվառված են քաղաքացիներ՝ Մանե Կարենի Գրիգորյանը, Աննա Ռոբերտի Գրիգորյանը, Մարիա Հարությունի Օսիպյանը և Կարեն Ռոբերտի Գրիգորյանը (հիմք՝ 2023 թվականի հուլիսի 15-ի Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային բաժանմունքի թիվ 8/12-1758 գրություն և «Վել-Մանո» համատիրության 2023 թվականի հուլիսի 31-ի № Վ/Մ-5 տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացիներ Աննա Ռոբերտի Գրիգորյանի և Կարեն Ռոբերտի Գրիգորյանի անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Վերոնշյալ քաղաքացիների անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում 1998 թվականի մարտի 1-ից առ այսօր անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի հուլիսի 21-ի N US-21072023-99-0372 տեղեկանք):

ե) Քաղաքացի Կարեն Ռոբերտի Գրիգորյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Արագած 6 թաղ. 4 շենք թիվ 10 հասցեի բնակարանը վարձակալել է 1998 թվականի մայիսի 18-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք

բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-իդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Կարեն Ռոբերտի Գրիգորյանի լիազորված անձ՝ Արմինե Սարգսի Անդոսյանի դիմումը բավարարել:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Արագածի 6-րդ թաղամաս 4 շենք թիվ 10 հասցեի 75,98 (յոթանասունհինգ ամբողջ իննսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝
   1) Աննա Ռոբերտի Գրիգորյանին ծնված՝ 1985 թվականին,
   2) Կարեն Ռոբերտի Գրիգորյանին ծնված՝ 1987 թվականին

   որպես ընդհանուր բաժնային սեփականություն՝ հավասար բաժիններով:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Աննա Ռոբերտի Գրիգորյանի և Կարեն Ռոբերտի Գրիգորյանին:
3. Քաղաքացիներ՝ Աննա Ռոբերտի Գրիգորյանի և Կարեն Ռոբերտի Գրիգորյանի իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Աննա Ռոբերտի Գրիգորյանին և Կարեն Ռոբերտի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

11.08.2023

X

2023թ. Գյումրի համայնք **Ա.ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» օգոստոսի 2023 թվական N 2043Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԷԼՎԻՌԱ ՀՈՎՍԵՓԻ ԱԶԱՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Գայանե Խաչատուրի Ազարյանը (անձնագիր՝ AU 0265756, տրված՝ 11.05.2021թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի Անի թաղ.9փ.7 շենք 28 բնակարան հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի օգոստոսի 1-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Անի թաղամաս 9 փողոց 7 շենք թիվ 28 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի ապրիլի 27-ի թիվ 4 որոշմամբ Անի թաղամաս 9 փողոց 7 շենք թիվ 28 հասցեի բնակարանը հատկացվել է Սաթիկ Պետրոսի Սեխպոսյանի երկու անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, թոռանը և տրվել թիվ 28 միասնական օրդերը:

Քաղաքացիներ՝ Սաթիկ Պետրոսի Սեխպոսյանը և Հովսեփ Հրաչիկ Ազարյանը մահացել են (հիմք՝ ԱԲ 224929 և ԱԱ 001685 մահվան վկայականներ):

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի ապրիլի 27-ի թիվ 4 որոշմամբ տրված թիվ 28 միասնական օրդերը , Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային բաժանմունքի 2023 թվականի հուլիսի 15-ի N 8/12-1759 գրությունը, «Կարին» համատիրության 2023թվականի հուլիսի 31-ի N 043 տեղեկանքը, Գայանե Խաչատուրի Ազարյանի, Էլվիռա Հովսեփի Ազարյանի անձնագրերի պատճենները, Ջուլիետա Հովսեփի Ազարյանի նույնականացման քարտի պատճենը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի օգոստոսի 1-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի օգոստոսի 8-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Գայանե Խաչատուրի Ազարյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Անի թաղամասի 9-րդ փողոց 7 շենք, թիվ 28 հասցեի 60.83 (վաթսուն ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 31072023-08-0059 վկայական):

բ) Անի թաղամասի 9-րդ փողոց 7շենք թիվ 28 հասցեի բնակարանը 1991 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի ապրիլի 27-ի թիվ 4 որոշում):

գ) Ք. Գյումրի Անի թաղ. 9 փողոց 7 շենք թիվ 28 հասցեում հաշվառված բնակվում են Էլվիռա Հովսեփի Ազարյանը, Ջուլիետա Հովսեփի Ազարյանը, Գայանե Խաչատուրի Ազարյանը (հիմք՝ Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային բաժանմունքի 2023 թվականի հուլիսի 15-ի N 8/12-1759 տեղեկանք, «Կարին» համատիրության 2023 թվականի հուլիսի 31-ի N 0/43 տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ ՝ Էլվիռա Հովսեփի Ազարյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և նրա կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ:

Քաղաքացի Գայանե Խաչատուրի Ազարյանի անվամբ Կոտայքի մարզ համայնք Աբովյան գյուղ Առինջ Կ. Հովագիմյան փողոց 28 շենք 1 բնակարանի նկատմամբ գրանցված է ընդհանուր բաժնային սեփականության իրավունք /բաժնեմասը 1/2/ և նրա անվամբ 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Կոտայքի մարզ համայնք Աբովյան գյուղ Առինջ Կ. Հովագիմյան փողոց 28 շենք 1 բնակարանի նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Քաղաքացի Ջուլիետա Հովսեփի Ազարյանի անվամբ Արմավիրի մարզ, համայնք Փարաքար գյուղ Այգեկ 04-009-0137-0037 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի և Կոտայքի մարզ, համայնք Աբովյան գյուղ Առինջ Խ. Աբովյան թաղամասի 2-րդ փողոց 28 շենք 1 բնակարան հասցեով անշարժ գույքի /բաժնեմաս 1/2/ նկատմամբ գրանցված է ընդհանուր բաժնային սեփականության իրավունք, 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Արմավիրի մարզ, համայնք Փարաքար գյուղ Այգեկ 04-009-0137-0037 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի և Կոտայքի մարզ, համայնք Աբովյան գյուղ Առինջ Խ. Աբովյան թաղամասի 2-րդ փողոց 28 շենք 1 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ ,իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2023 թվականի հուլիսի 21-ի N US-21072023-99-0369, N US-21072023-99-0365 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Գայանե Խաչատուրի Ազարյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Անի թաղամաս 9 փողոց 7 շենք թիվ 28 հասցեի բնակարանը վարձակալել է 1991 թվականի ապրիլի 27-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Քաղաքացի Գայանե Խաչատուրի Ազարյանի անվամբ Կոտայքի մարզ համայնք Աբովյան գյուղ

Առինջ Կ. Հովագիմյան փողոց 28 շենք 1 բնակարանի նկատմամբ գրանցված է ընդհանուր բաժնային սեփականության իրավունք /բաժնեմասը 1/2/ և նրա անվամբ 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել էԿոտայքի մարզ համայնք Աբովյան գյուղ Առինջ Կ.Հովագիմյան փողոց 28 շենք 1 բնակարանինկատմամբ:

Քաղաքացի Ջուլիետա Հովսեփի Ազարյանի անվամբ Արմավիրի մարզ, համայնք Փարաքար գյուղ Այգեկ 04-009-0137-0037 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի և Կոտայքի մարզ, համայնք Աբովյան գյուղ Առինջ Խ. Աբովյան թաղամասի 2-րդ փողոց 28 շենք 1 բնակարան հասցեով անշարժ գույքի /բաժնեմաս 1/2/ նկատմամբ գրանցված է ընդհանուր բաժնային սեփականության իրավունք, 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Արմավիրի մարզ, համայնք Փարաքար գյուղ Այգեկ 04-009-0137-0037 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի և Կոտայքի մարզ, համայնք Աբովյան գյուղ Առինջ Խ. Աբովյան թաղամասի 2-րդ փողոց 28 շենք 1 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Գայանե Խաչատուրի Ազարյանի դիմումը բավարարեց մասամբ:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Անի թաղամասի 9-րդ փողոց 7 շենք, թիվ 28հասցեի 60.83 (վաթսուն ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝
   1) Էլվիռա Հովսեփի Ազարյանին ծնված՝ 1994 թվականին,

   որպես սեփականություն:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի Էլվիռա Հովսեփի Ազարյանին :
4. Քաղաքացի Էլվիռա Հովսեփի Ազարյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Էլվիռա Հովսեփի Ազարյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

ԱՐԹՈՒՐ ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. Գյումրի համայնք **Ա.ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«11» սեպտեմբեր 2023 թվականի N 2092Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ N 17/18 ՀԱՍՑԵԻ 6.37 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԵՎ ԹԵՔԱՀԱՐԹԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 17 շենքի N 2/1 հասցեի խանութը սեփականության իրավունքով պատկանում է «Սվետլանա-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 16092022-08-0030 վկայական):

Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 17/18 հասցեի 6.37 (վեց ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 08082023-08-0036 վկայական):

«Սվետլանա-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սեդա Սաֆարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով «Սվետլանա-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 17 շենքի N 2/1 հասցեի խանութին կից Գարեգին Նժդեհի փողոցի N 17/18 հասցեի 6.37 (վեց ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասն աստիճաններ և թեքահարթակ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրելու խնդրանքով:

Նկատի ունենալով փաստացի իրադրությամբ պայմանավորված քաղաքաշինական հնարավորությունը, հաշվի առնելով, որ տրամադրված հողամասը գտնվում է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 48[1]-րդ հոդվածի 6-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 3-րդ կետի «ա» ենթակետի և հիմք ընդունելով «Սվետլանա-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սեդա Սաֆարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հունիսի 26-ին N 13291 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. «Սվետլանա-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը աստիճաններ և թեքահարթակ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 17/18 հասցեի 6.37 (վեց ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը 10 (տասը) տարի ժամկետով և տարեկան վարձավճարի չափ սահմանել 14014 (տասնչորս հազար տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սահմանված կարգով կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր (պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժին):
3. Պարտավորեցնել «Սվետլանա-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը.
   1) Աստիճաններ և թեքահարթակ կառուցելու համար սահմանված կարգով Գյումրի համայնքի ղեկավարին ներկայացնել հաստատված ձևի հայտ ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար:

2) Համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին» օրենքի և այլ նորմատիվ, իրավական փաստաթղթերի պահանջների համաձայն, սեփական միջոցներով պատվիրել նախագծային փաստաթղթեր ու սահմանված կարգով ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինթույլտվություն:

3) Շինաշխատանքները նախագծով սահմանված ժամկետներում ավարտելուց հետո շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

4. Պայմանագրի նոտարական վավերացումը և պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը կատարել «Սվետլանա-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցների հաշվին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Սվետլանա-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.08.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ՊԱՊԻԿՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«11» օգոստոսի 2023 թվականի N 2041-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 19/17 ՀԱՍՑԵԻ 8.18 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԵՎ ԹԵՔԱՀԱՐԹԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի N 19/5 հասցեի 240.0 (երկու հարյուր քառասուն) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Կարեն Հեկտորի Քերոբյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20012022-08-0008 վկայական), որի վրա նախատեսված է կառուցել բազմաֆունկցիոնալ օբյեկտ:

Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի N 19/17 հասցեի 8.18 (ութ ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 12072023-08-0025 վկայական):

Քաղաքացի Կարեն Հեկտորի Քերոբյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի N 19/5 հասցեի հողամասին կից Վազգեն Սարգսյան փողոցի N 19/17 հասցեի 8.18 (ութ ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասն աստիճաններ և թեքահարթակ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Նկատի ունենալով փաստացի իրադրությամբ պայմանավորված քաղաքաշինական հնարավորությունը, հաշվի առնելով, որ տրամադրված հողամասը գտնվում է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 48՝-րդ հոդվածի 6-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 3-րդ կետի «ա» ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Կարեն Հեկտորի Քերոբյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հունվարի 31-ին N 1461 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Կարեն Հեկտորի Քերոբյանին աստիճաններ և թեքահարթակ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի N 19/17 հասցեի 8.18 (ութ ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը 10 (տասը) տարի ժամկետով և տարեկան վարձավճարի չափ սահմանել 14724 (տասնչորս հազար յոթ հարյուր քսանչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սահմանված կարգով կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր (պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժին):
   1) Պարտավորեցնել քաղաքացի Կարեն Հեկտորի Քերոբյանին.
   2) Աստիճաններ և թեքահարթակ կառուցելու համար սահմանված կարգով Գյումրի համայնքի ղեկավարին ներկայացնել հաստատված ձևի հայտ ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար:
   3) Համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին» օրենքի և այլ նորմատիվ, իրավական փաստաթղթերի պահանջների համաձայն, սեփական միջոցներով պատվիրել նախագծային փաստաթղթեր ու սահմանված կարգով ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինթույլտվություն:
   4) Շինաշխատանքները նախագծով սահմանված ժամկետներում ավարտելուց հետո շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

3. Պայմանագրի նոտարական վավերացումը և պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը կատարել քաղաքացի Կարեն Հեկտորի Քերոբյանի միջոցների հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կարեն Հեկտորի Քերոբյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

07.06.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի